Արձանագրություն

Սույն թվականի ապրիլի 10-ին Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի վարչական շենքի 2-րդ հարկում՝ 10-րդ սենյակում, համաձայն ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, տեղի ունեցավ <<<Հարսնաքար>> հյուրանոցային համալիրի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի չորրորդ հանրային քննարկումը:

Քննարկմանը մասնակցում էին Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Մեսրոպ Մկրտչյանը, բաժնի առաջատար մասնագետ Հայկ Ղուկասյանը, <<<Հարսնաքար>> ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Սերգեյ Դարբինյանը, Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մարտին Պետրոսյանը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ից Նելլի Մովսիսյանը:

Նելլի Մովսիսյանը ներկայացրեց Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը: Նշեց, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է համապատասխան Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների: Նշվեց, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է կարծիքի Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներ և այլ գերատեսչություններ, որից հետո Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ներկայացվել է ձեռնարկողին լրամշակումներ իրականացնելու համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը լրամշակվել է՝ հաշվի առնելով ներկայացված դիտողությունները և առաջարկությունները:

<<<Հարսնաքար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված համալիրի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ:

Լսեցին՝

Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Մեսրոպ Մկրտչյանին և <<<Հարսնաքար>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Սերգեյ Դարբինյանին, որը համառոտ ներկայացրեց փորձաքննության գործընթացը:

Տվյալ գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի:

Նախնական գնահատման կարգն ուսումնասիրելու ընթացքում, կարծիքների և դիտողությունների համար հայտն ուղարկվել է տարբեր գերատեսչություններ:

Փորձաքննության իրականացումը կատարվել է 2 փուլով:

Օրենքի պահանջների համաձայն, լսումներից 7 օր առաջ իրականացվել է հանրության ծանուցում:

<<<Հարսնաքար>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Սերգեյ Դարբինյանին՝

Հաշվի առնելով գերատեսչությունների կողմից ներկայացված առաջարկությունները, դիտողությունները, փորձում ենք շարունակել գործընթացը:

Նախատեսվում է կառուցել Սևանի ավազանում թափոնաջրերի մշակման ամենամեծ կայանը, որը համապատասխանեցված է միջազգային ստանդարտներին:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց մասնակիցներին հետաքրքրող հարցերին:

Նա տեղեկացրեց, որ մաքրման կայանից դուրս եկող ջուրը հետագայում անօգտագործելի լինելու պատճառով կուտակվելու է հորում և չի օգտագործվելու որպես ոռոգման ջուր:

Սակայն կատարվում են որոշակի ուսումնասիրություններ ջրի որակի բարձրացման հետ կապված:

Հանրային քննարկման մասնակիցների, ինչպես նաև Սևանի համայնքապետարանի կողմից, <<<Հարսնաքար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտին տրվեց հավանություն: